

Մ.Գ. Մանասյան Հ.Մ. Մանասյան

ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հողվածում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության բնակչության փարաբնակեցման հիմնական առանձնահատկությունները և միտումները, առկա հիմնախնդիրները, նշվում են դրանց լուծման գործում փարաբնակեցման գիտականորեն հիմնավորված քաղաքականության սկզբունքները, ուղղությունները և իրականացման մեխանիզմները: Հիմնավորվում է, որ ներկա ժամանակներում բնակչության փարաբնակեցման կարգավորման ժամանակ կարևոր նշանակություն է ստանում սահմանամերձ բնակավայրերի բնակչության անվտանգության ապահովումը և Հայաստանի Հանրապետության փարածքային ամբողջականության ամրապնդումը: Առանձնացվում են այն գործոններն ու պայմանները, որոնք պայմանավորում են փարաբնակեցման քաղաքականության նոր ուղղությունները: Դրանց հիման վրա առաջարկվում են փարաբնակեցման զարգացման 5 այլընտրանքային ռազմավարություններն ու դրանց իրականացման ուղիները:

Առանցքային բառեր. փարաբնակեցում, փարաբնակեցման համակարգ, փարածաշրջանային կենտրոն, տեղական կենտրոն, կայուն փարաբնակեցում, համայնքների խոշորացում, փարաբնակեցման քաղաքականություն, այլընտրանքային ռազմավարություններ:

ՀՀ-ում տեղի ունեցած քաղաքական, տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական տեղաշարժերը չեն կարող ազդեցություն չունենալ տարաբնակեցման կառուցվածքի և համակարգաստեղծ գործընթացների վրա: Սակայն, Հայաստանի տարաբնակեցման համակարգի (ՏՀ) ներկա միակենտրոն բնույթը և համակենտրոնացման առկա միտումները բոլորովին չեն բխում մեր երկրի քաղաքա-աշխարհագրական դիրքից և սոցիալ-տնտեսական զարգացման շահերից: Խորհրդային տարիներից ժառագայություն ստացած՝ բնակչության և բնակավայրերի գերկենտրոնացումը Երևանում և մերձերևանյան շրջաններում, ինչպես նաև բարձրլեռնային և սահմանամերձ գոտիների բնազրկումը շարունակվում էր նաև անկախության տարիներին: Դա խիստ անցանկանալի է ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև բնապահպանական և աշխարհաքաղաքական առումներով, և վտանգավոր՝ ռազմաքաղաքական տեսանկյունից:

Այլ կերպ ասած, տարաբնակեցման ներկա վիճակն ու արդի միտումները չեն համապատասխանում ՀՀ քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման շահերին, և առաջանում է պետության կողմից միջամտության և դրա վերափոխման անհրաժեշտություն, որը նշանակում է գիտականորեն հիմնավորված տարաբնակեցման (էկիստիկական) քաղաքականության իրականացում:

Նախկինում կենտրոնացված-պլանային տնտեսության պայմաններում, երբ արտադրական ձեռնարկությունները, հողը, շինությունները պետական սեփականություն էին, բնակավայրերի և տարաբնակեցման զարգացման և տարածքային կազմակերպման հարցերն ըստ էության, լուծվում էին կենտրոնական մարմինների կողմից ստեղծված համապատասխան նախագծերի և սխեմաների (Հայաստանի տարաբնակեցման նախագիծ, շրջանային հատակագծման սխեմաներ, բնակավայրերի գլխավոր հատակագծեր) միջոցով: Դրանք երկարժամկետ

նախագծեր էին և զուգակցվում էին տարածքի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական զարգացման հեռանկարային ծրագրերի հետ: Սակայն, դրանք հաճախ չէին իրագործվում, քանի որ երկրի ճյուղային գերատեսչական կառավարումը չէր կարող իրականացնել իրենց էությանը տարբեր կարգի տարածքային օբյեկտների (Հայաստանի ամբողջ տարածք, տարածաշրջան, բնակավայր) սոցիալ-տնտեսական համալիր զարգացումը: Բացակայում էին տարաբնակեցման քաղաքականության իրականացման ինստիտուցիոնալ և սոցիալ-տնտեսական անհրաժեշտ մեխանիզմներն ու գործիքները, մասնավորապես բացակայում էր տարածքային կառավարման համակարգը, իսկ տեղական ինքնակառավարման համակարգը ձևական բնույթ էր կրում:

Այսպես, Երևան քաղաքի աճի սահմանափակմանը և բարձրլեռնային ու սահմանամերձ բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման ակտիվացմանը նվիրված բազմաթիվ որոշումները և նախագծերը չէին իրագործվում, և արդյունքում մեծանում էին տարաբնակեցման տարածական և կառուցվածքային անհամամասնությունները: Բնակչությունը, արտադրությունը և սպասարկումը շարունակում էին կենտրոնանալ Երևանում, միևնույն ժամանակ բարձրլեռնային և սահմանամերձ գոտիներում վերանում էին տասնյակ գյուղեր:

Հարկ է նշել, որ թեև անկախության տարիներին տարաբնակեցման քաղաքականության իրականացման համար ստեղծվեցին որոշակի իրավաքաղաքական և տնտեսական մեխանիզմներ ու գործիքներ (հողային և քաղաքաշինական կադաստրեր, տարածքային կառավարման մարմիններ և այլն), սակայն այդ տարիներին մշակված և կառավարության կողմից 2003թ. հաստատված ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծը, բարձրլեռնային և սահմանամերձ գյուղական բնակավայրերի զարգացման վերաբերյալ ծրագրերն ու հայեցակարգերը դարձյալ չէին իրականանում, մնալով զուտ ցանկությունների մակարդակում [1]: Դա բացատրվում էր նրանով, որ դրանք գիտականորեն թույլ էին հիմնավորված, հաշվի չէին առնում երկրի տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական զարգացման միտումներն ու հեռանկարները, առկա ֆինանսական և նյութական ռեսուրսներն ու հնարավորությունները:

Տարաբնակեցման քաղաքականության ոչ արդյունավետ լինելը բացատրվում էր նաև նրանով, որ տարաբնակեցումը դիտվում էր ավանդական տարածական մոտեցմամբ, որպես որոշակի տարածքում տարբեր մեծություն և գործառույթներ իրականացնող բնակավայրերի ցանց, և հաշվի չէին առնվում տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացները, դրանց բնույթն ու ուղղվածությունը տարբեր տարածաշրջաններում: Տարաբնակեցումը դիտելով սուկ որպես տարածական գոյացություն և չբացահայտելով նրա ինքնազարգացման և ինքնակարգավորման գործընթացներն ու մեխանիզմները, փոփոխությունների միտումները՝ անհնար է ցանկացած մեծության տարածքային միավորի սահմաններում կատարել կանխատեսումներ, որոշել հեռանկարային տարաբնակեցումը: Մինչդեռ, տարաբնակեցման տարածաժամանակային վերլուծությունը, տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների և զարգացման մեխանիզմների բացահայտումը իրական նախադրյալներ են ստեղծում տարաբնակեցման գիտականորեն հիմնավորված քաղաքականության իրականացման և ճիշտ կանխատեսումների համար:

Շուկայական տնտեսության, հողի և այլ արտադրության միջոցների մասնավոր սեփականության պայմաններում բոլորովին կիրառելի չեն տարաբնակեցման քաղաքականության մեջ

նախկինում ընդունված պլանային և դիրեկտիվային-նորմատիվային մոտեցումները: ՀՀ կառավարության կողմից հաստատված տարաբնակեցման նախագիծը չէր կարող տարաբնակեցման քաղաքականության իրական հիմք դառնալ, քանի որ տարաբնակեցման հեռանկարային զարգացումը հիմնականում կապվում էր տարածքային ռեսուրսների հնարավորությունների, ժողովրդագրական և էկոլոգիական տարողունակության հետ՝ արհամարհելով տարաբնակեցման սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական գործոնների դերը, ինչպես նաև տարաբնակեցման ինքնակարգավորման և ինքնազարգացման հատկանիշները:

Մինչդեռ, Հայաստանի զարգացման ներկա փուլում փոխվում են տարաբնակեցման քաղաքականության նպատակների և սկզբունքների իրականացման մեխանիզմները: Իսկ որո՞նք են այն նոր պայմաններն ու գործոնները, որոնք թելադրում են տարաբնակեցման քաղաքականության նոր ուղղվածությունը.

1. համայնքների խոշորացումը, դրանց լիազորությունների մեծացումը տարածաշրջանային և տեղական խնդիրների լուծման հարցերում:
2. Շուկայական ազատ տնտեսության զարգացումը: Անշարժ գույքի (հող, բնակարան և այլն) սեփականության տարբեր ձևերի առկայությունը, դրանց շուկայի ձևավորումը:
3. Բնակավայրերի զարգացման սոցիալական գերակայությունների հաստատումը, բնակչության աղքատության և գործազրկության աստիճանական հաղթահարումը:
4. ՀՀ բնակչության զանգվածային արտագաղթը և աննպաստ ժողովրդագրական իրավիճակի ձևավորումը (ցածր ծնելիություն, բնակչության ծերացում և այլն):
5. Շրջակա միջավայրի պահպանության և էկոլոգիական հավասարակշռության ստեղծման անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով նոր պայմաններն ու գործոնները՝ անհրաժեշտ է մշակել մարդակենտրոն տարաբնակեցման քաղաքականություն, այսինքն քաղաքականության կենտրոնում պետք է լինի մարդը, նրա կենսագործունեության միջավայրի բարելավումը: Դա նշանակում է, որ ՀՀ բոլոր համայնքներում և բնակավայրերում անհրաժեշտ է ապահովել բնակչության ամենօրյա կենսագործունեության (աշխատանք, կենցաղ, հանգիստ) համար լիարժեք և նորմալ պայմաններ ու միջավայր՝ անկախ բնակավայրի դիրքից, մեծությունից և գործառույթների բնույթից: Այլ կերպ ասած՝ քաղաքականության կարևոր նպատակներից մեկը տարբեր կարգի տարաբնակեցման համակարգերի ձևավորումն է, որտեղ տարաբնակեցման տնտեսական, սոցիալական և բնապահպանական կողմերի հավասարակշռությունը հաստատվում է մարդու կենսագործունեության տարածաժամանակային արդյունավետ կազմակերպման և դրա ընթացքում առաջացած բազմապիսի պահանջունքների բավարարման տեսանկյունից:

ՀՀ տարաբնակեցման համակարգի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն դեռևս շատ հեռու է նման խնդիրներ լուծելուց: Ուստի անհրաժեշտ է շուտափույթ կերպով մշակել տարաբնակեցման ազգային նոր քաղաքականության հիմնական սկզբունքներն ու ուղղությունները [2, 3]: Հայաստանի տարաբնակեցման զարգացման հայեցակարգի հիմքում պետք է լինի ծրագրանպատակային մոտեցումը, երբ դրվում են որոշակի ռազմավարական նպատակներ և նշում դրանց հասնելու ուղիներն ու մեթոդները:

Մեր կարծիքով, Հայաստանի տարաբնակեցման վերափոխման հիմնական խնդիրը տարաբնակեցման այնպիսի համակարգի ստեղծումն է, որը կնպաստեր հետևյալ չորս նպատակ-

ների իրագործմանը.

- 1) անկախ բնակավայրերի մեծությունից և տիպից՝ պետք է ապահովվի մարդու բնականոն զարգացումը և նրա բազմապիսի պահանջմունքների բավարարումը տարբեր տեսակի ծառայություններով,
- 2) պետք է բարենպաստ պայմաններ ստեղծվեն տնտեսության զարգացման և արդյունավետ տարածքային կազմակերպման համար,
- 3) պետք է ստեղծվեն բնական միջավայրի պահպանման և էկոլոգիական վիճակի բարեփոխման երաշխիքներ,
- 4) պետք է ապահովվեն Հայաստանի տարածքային ամբողջականությունը և սահմանամերձ շրջանների բնակչության պաշտպանվածությունն ու անվտանգությանը:

Հասկանալի է, որ նշված նպատակների իրագործումը ենթադրում է տարաբնակեցման մեջ խոր և կառուցվածքային տեղաշարժեր: Հարցն ավելի է բարդանում նրանով, որ վերոհիշյալ նպատակների իրագործումը տարաբնակեցման գործընթացների մեջ կարող է առաջ բերել տարբեր, երբեմն միմյանց հակադիր միտումներ: Այսպես, բնակչության կենսապայմանների տարածքային տարբերությունների նվազեցման, բնակչության անվտանգության ապահովման, ինչպես նաև էկոլոգիական իրավիճակի բարեփոխման անհրաժեշտությունը տարաբնակեցման մեջ ավելացնում է ապակենտրոնացման միտումները, մինչդեռ մշակող արդյունաբերության և գիտության զարգացման և արդյունավետության բարձրացման շահերը հաճախ պահանջում են միջոցների կենտրոնացում ու բնակչության համակենտրոնացում:

Ներկա պայմաններում, մեր երկրի տարաբնակեցման քաղաքականության մեջ անհրաժեշտ է դրսևորել բազմատարբերակային մոտեցում: Դրանց օգտագործման դեպքում հարկավոր է հաշվի առնել ՀՀ ներկա տարաբնակեցման առանձնահատկությունները, միտումներն ու հիմնահարցերը: Դրանք են.

1. քաղաքային բնակչության բարձր մասնաբաժինը (2001թ.՝ 64.2%, 2020թ.՝ 63.9%) ՀՀ բնակչության ընդհանուր թվում, նրա նվազումն անկախության տարիներին [4]:
2. ՀՀ տարաբնակեցման համակարգի միակենտրոն բնույթը, անկախության տարիներին Երևանի բնակչության մասնաբաժնի շարունակվող աճը (2001թ.՝ 34.3%, 2020թ.՝ 36,6%): Բնակչության ներքին միգրացիան առավելապես միակենտրոն բնույթ է կրում, որի արդյունքում բնագրկվում են սահմանամերձ և բարձրլեռնային գոտիները:
3. Անկախության տարիներին բնակչության արտագաղթը թե՛ տարածական և թե՛ ժամանակային առումներով համատարած բնույթ է կրել, նվազել են գրեթե բոլոր բնակավայրերի բնակչության թվերը: Եթե անկախության առաջին երկու տասնամյակում ՀՀ-ից արտագաղթը մեծ չափերի էր հասնում քաղաքային բնակավայրերից, ապա վերջին տասնամյակում՝ գյուղական բնակավայրերից:
4. Առավել մեծ չափերով նվազել են լեռնային և սահմանամերձ մարզերի, հատկապես աղետի գոտում գտնվող Լոռու և Շիրակի մարզերի բնակչության թվերը: Լոռու մարզի բնակչության թիվը 2001-2020թթ. նվազել է 1.35 անգամ, իսկ Շիրակինը՝ 1.23 անգամ:
5. Քաղաքների համակարգում խիստ գերակշռում են փոքր քաղաքները (մինչև 20 հազ.), որը վկայում է քաղաքների համակարգի ոչ հասունության և պարզունակ կառուցվածքի

մասին:

6. Նախկինում բնակչության թվով առավել արագ աճող արդյունաբերական քաղաքները՝ Վանաձոր, Հրազդան, Չարենցավան, Ալավերդի, Ստեփանավան և այլն, անկախությունից հետո դարձան բնակչության թվի նվազման ամենաբարձր տեմպեր ունեցող քաղաքները:
7. Քաղաքային և գյուղական բնակչության ծնելիության ցածր մակարդակն ու նվազման միտումները: Բնակավայրերի մեծ մասում ազատ աշխատանքային ռեսուրսների առկայությունը:
8. Բնակչության և բնակավայրերի կուտակումը մերձերևանյան շրջանում: Անկախության տարիներին ըստ բարձրության գոտիների և Երևանից ունեցած հեռավորության մեծացման նվազել են բնակավայրերի և բնակչության մասնաբաժինները:
9. Սյունիքի, Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերի սահմանամերձ գոտիներում գերակշռում են փոքր գյուղական բնակավայրերը (մինչև 500 բն.): Վերջին տարիներին տարածքային և դիրքային կորստների արդյունքում, գյուղատնտեսական հողահանդակները միջգյուղական ճանապարհները և անմիջապես բնակավայրերը գտնվում են թշնամու անմիջական նշանառության տակ: Դրանք հանգեցնում են կենսագործունեության դժվարացմանը, իսկ առանձին դեպքերում նաև բնակչության բնագրկմանը:
10. Անկախության տարիներին տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների ակտիվացում տարածաշրջանային (մարզային) և տեղական (համայնքային) մակարդակներում:

Թեև ՀՀ տարածքում տարաբնակեցման հիմնախնդիրները բազմաթիվ են, սակայն նրանցից իրենց կարևորությամբ և ընդգրկվածությամբ կարելի է առանձնացնել հետևյալ երեքը.

- 1) միակենտրոն տարաբնակեցման համակարգի ձևավորում, քաղաքային գործառույթների ոչ հիմնավորված խիստ կենտրոնացում Երևանում և նրա մերձակա գոտում, Երևանի գերաճի սահմանափակում,
- 2) ՀՀ տարաբնակեցման համակարգի տարածքային և գործառույթային-ենթակարգային դեռևս ոչ հավասարակշռված կառուցվածքի առկայություն, և դրա հետ կապված՝ տարածաշրջանային-մարզային և տեղական-համայնքային մակարդակներով համակարգաստեղծ գործընթացների ակտիվացում և տարածաշրջանային ու տեղական կենտրոնների ցանցի աստիճանական ձևավորում,
- 3) բարձրլեռնային և սահմանամերձ գոտիների զարգացման ակտիվացում, բնակավայրերի և դրանց համակարգերի կայուն զարգացում, նոր աշխատատեղերի ստեղծում և բնակչության միգրացիայի կարգավորում:

Ելնելով նշված նպատակներից և խնդիրներից, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ քաղաքական, տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական զարգացման արդի վիճակն ու առկա միտումները, ՀՀ ռեսուրսային (մարդկային, տարածքային, ջրային, ռեկրեացիոն, և այլն) հնարավորություններն ու տարողունակությունը, կարելի է առաջարկել և մշակել տարաբնակեցման քաղաքականության հետևյալ այլընտրանքային ռազմավարությունները, որոնք ուղղված են գոյություն ունեցող համապետական, տարածաշրջանային (մարզային) և տեղական (համայնքային) խնդիրների լուծմանը:

Ռազմավարություն 1. Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական հզոր ներուժի արդյունավետ օգտագործումը գիտատար արտադրությունների, ՏՏ-ի, նորագույն ծառայությունների և զբոսաշրջության զարգացման համար: Երևանում մայրաքաղաքային որոշ գործառույթների (կառավարում, բարձրագույն կրթություն, գիտություն, մշակույթ, նորագույն ծառայություններ) հետագա հնարավոր կենտրոնացումը պետք է անպայման ուղեկցվի նրա մայրաքաղաքային միջավայրին ոչ հարիր և օտար գործառույթների, մասնավորապես՝ բազմաթիվ արտադրությունների և ծառայությունների դուրս բերմամբ Երևանից և դրանց տեղաբաշխմամբ տարաբնակեցման ավելի ցածր կարգի կենտրոններում: Հարկ է նշել, որ այս ռազմավարության մեջ ընդհանուր գծերով պահպանվում և խորացվում են ՀՀ տարաբնակեցման համակենտրոնացման գոյություն ունեցող միտումները: Այս ռազմավարության կիրառման դեպքում զարգացման վեկտորը Երևանից ուղղվում է դեպի մայրաքաղաքային տարածաշրջանը, նրա քաղաք-արբանյակները, հարակից մարզերի բնակավայրերը:

Ռազմավարություն 2. Այս ռազմավարությունը ենթադրում է հանրապետությունում տարաբնակեցման այնպիսի ցանցի դրսևորում, որն առավելագույն չափով կնպաստի նրա պաշտպանունակության ամրապնդման, սահմանամերձ բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման ակտիվացման շահերին: Դրան կարելի է հասնել ենթակառուցվածքների զարգացման, վարկային և հարկային արտոնությունների (որոշակի նպատակային պայմաններով) կիրառման շնորհիվ դրանց ներդրումային գրավչության բարձրացմամբ, գյուղերի ամրապնդմամբ, բազմապիսի ծառայություններ մատուցող տարաբնակեցման հենման կենտրոնների ստեղծմամբ: Այս ռազմավարությունն ուղղված է ՀՀ սահմանամերձ և բարձրլեռնային գոտիներում տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների ակտիվացմանը, ենթակառուցվածքների և միջբնակավայրային կապերի զարգացմանը: Հարկային և վարկային արտոնություններով ներդրումների խրախուսումը, նոր աշխատատեղերի ստեղծումը հնարավորություն կտան առավելագույնս օգտագործել նշված գոտիների բնական և մարդկային ռեսուրսները, աստիճանաբար մեղմացնել մայրաքաղաքային տարածաշրջանի և բարձրլեռնային ու սահմանամերձ գոտիների միջև առկա սոցիալ-տնտեսական զարգացման տարբերությունները: Այդպիսի ռազմավարությունը կհանգեցնի բարձրլեռնային և սահմանամերձ գոտիների բնակավայրերում բնակչության թվի նվազման առկա միտումների աստիճանական կանխմանը, տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների ակտիվացմանը, տարաբնակեցման տարբեր կարգի կենտրոնների հավասարակշռված զարգացմանը և կայուն տարաբնակեցման ձևավորմանը: Ներկա պահին տարաբնակեցման քաղաքականության առավել նախընտրելի ռազմավարությունն է, քանի որ այն ավելի մեծ չափով է նպատում երկրի տարածքային ամբողջականության ամրապնդմանը:

Ռազմավարություն 3. Այս ռազմավարության իրականացումն անմիջականորեն առնչվում է ՀՀ-ում իրականացվող վարչատարածքային փոփոխությունների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման նոր համակարգի ձևավորման հետ: Նախկին վարչական շրջանների միավորման ճանապարհով մարզերի առանձնացման, իսկ ներկա փուլում նաև համայնքների խոշորացման արդյունքում ՀՀ տարաբնակեցման համակարգում

օբյեկտիվ իրավական-տնտեսական նախադրյալներ են ստեղծվում տարածաշրջանային-մարզային և տեղական-համայնքային կենտրոնների ցանցի զարգացման համար, ՀՀ բնակչության և տնտեսության ապակենտրոնացման միտումների ձևավորման և ակտիվացման համար: Այս ռազմավարության դեպքում ծայրամասային և լեռնային տարածքներում մարզ-կենտրոնների քաղաքաստեղծ հիմքում տարածաշրջանային գործառույթների ընդլայնումն ու զարգացումը, հեռանկարում դրանց դարձնելու են տարածաշրջանային «մայրաքաղաքներ», այսինքն Երևանի զարգացմանը հակակշռող կենտրոններ: Իսկ տարածքի տարաբնակեցման բնույթի հաշվառումով հիմնավորված համայնքների խոշորացման գործընթացները հնարվորություն կտան նոր տեղական կենտրոնների ցանցի ձևավորմանը, որը ամբողջ ՀՀ-ում կապահովի առավել համաչափ և ապակենտրոնացված տարաբնակեցում: Հարկ է նշել, որ վարչատարածքային բաժանման և տարաբնակեցման փոխազդեցությունները դինամիկ բնույթ են կրում: Մի կողմից տարաբնակեցման գործընթացները ժամանակի ընթացքում պահանջում են վարչատարածքային միավորների սահմանների փոփոխություններ, իսկ մյուս կողմից վարչատարածքային միավորների սահմաններում տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացներն ավելի օբյեկտիվ, կայուն և ամբողջական բնույթ են կրում:

Ռազմավարություն 4. Այս ռազմավարությունը ենթադրում է տարաբնակեցման և արտադրության տեղաբաշխման առավելագույն համապատասխանություն, ընդ որում հաշվի են առնվում ՀՀ սոցիալ-տնտեսական առկա շրջանացումը և դրա տաքսոնոմիական միավորները: Դրան հասնում են տարաբնակեցման գոտիների և արդյունաբերական նոր կլաստերների, հանքարդյունաբերության, մշակող արդյունաբերության և զբոսաշրջության գոտիների փոխկապակցման շնորհիվ: Դրա հետևանքով ՏՀ-ում ներդրումների առումով առավել գրավիչ են դառնում և զարգացում են ստանում մասնագիտական քաղաք-կենտրոնները (հանքարդյունաբերության, մշակող արդյունաբերության, զբոսաշրջության):

Տվյալ ռազմավարության դեպքում ՀՀ նյութական և ֆինանսական ռեսուրսների մի զգալի մասն ուղղվում է ագրոարդյունաբերական միասնացման պայմանների ստեղծմանը, գյուղական տարածքների արագ զարգացմանը և աստիճանական ուրբանիզացմանը, գյուղական բնակչության սպասարկման մակարդակին: Դրա հետևանքով զարգացում են ստանում գյուղական տարաբնակեցման կենտրոնները, գյուղատնտեսական հումքի մշակման կենտրոնները, զգալիորեն կրճատվում է նվազող բնակչություն ունեցող բնակավայրերի թիվը:

Ռազմավարություն 5. Այն ենթադրում է ՀՀ-ում տարաբնակեցման այնպիսի ցանցի ստեղծում, որն առավելագույն չափով կնպաստի շրջակա միջավայրի պահպանությանը: Այսինքն, առաջնահերթ նշանակություն է ստանում ՀՀ բնակչության և տնտեսության ապակենտրոնացումը, Երևանի և հարակից բնակավայրերի աճի սահմանափակումը, ՀՀ-ում և առանձին մարզերում համաչափ և կայուն տարաբնակեցման ձևավորումը: Դրան կարելի է հասնել անտառային գոտիներում և էկոլոգիապես այլ խոցելի տարածքներում բնակչության կուտակման և տնտեսական գործունեության սահմանափակման, բնակավայրերի աճի կարգավորման շնորհիվ: ՀՀ առանձին բնակավայրերի, տարբեր կարգի ՏՀ-երի զարգացումը չպետք է խախտի էկոլոգիական հավասարակշռությունը, այլ ընդհակառակը՝ պետք է ստեղծի այնպիսի

տարաբնակեցում, որը ներդաշնակություն հաստատի մարդ-բնություն հարաբերություններում:

Տարաբնակեցման քաղաքականությունն ընդգրկում է վերոհիշյալ ռազմավարությունների որոշակի տարրեր: ՀՀ տարաբնակեցման բարելավմանն ուղղված նշված ռազմավարությունների կիրառման վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցից յուրաքանչյուրը տարբեր չափով է ազդում տարաբնակեցման վրա, կախված՝ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացմանն առնչվող լուծվելիք խնդիրների առաջնահերթություններից: Այս դեպքում, մեր կարծիքով, պետք է հաշվի առնվեն բոլոր գործոնները և պայմանները, խնդիրների և նպատակների կարևորությունն ու հրատապությունը, դրանց լուծման առաջնահերթությունները, և կախված դրանցից, տվյալ տարածքում ժամանակի տվյալ հատվածում նախապատվությունը տալ այս կամ այն ռազմավարությանը:

Տարաբնակեցման քաղաքականությունն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ ներկայումս պետության կողմից համայնքների խոշորացման հիմնավորված անցկացման դեպքում տեղական ինքնակառավարման զարգացումը և տարածքների տնտեսական հիմքի ամրապնդումն իրական նախադրյալներ են ստեղծում միջբնակավայրային բազմապիսի կապերի զարգացման, միասնական ենթակառուցվածքների ձևավորման, տարաբնակեցման տեղական կենտրոնների ստեղծման, այսինքն՝ համակարգաստեղծ գործընթացների ակտիվացման համար:

Դրան զուգահեռ ակտիվանում են տարաբնակեցումը կայունացնող և համաչափությանն ու հավասարակշռությանը նպաստող, ինքնակարգավորման և ինքնազարգացման գործընթացները:

Այսպիսով, ՀՀ տարաբնակեցման քաղաքականության վերը թվարկած ռազմավարությունները պետք է ելնեն և հաշվի առնեն՝

- 1) տարաբնակեցման ներկայիս համակարգի օբյեկտիվ վիճակը և կառուցվածքային առանձնահատկությունները:
- 2) Հասարակության մեջ տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական և հոգեբանական տեղաշարժերը:
- 3) Տարաբնակեցման՝ որպես ինքնակարգավորվող և ինքնազարգացող համակարգ լինելու հանգամանքը:
- 4) «Մարդակենտրոն» սկզբունքը, այսինքն՝ հումանիստական մոտեցումը պետք է լինի տարաբնակեցման քաղաքականության բոլոր ռազմավարությունների առանցքը:
- 5) ՀՀ տարածքային ամբողջականության ամրապնդումը, սահմանամերձ գոտիների բնակչության անվտանգության ապահովումը:

Գրականություն

1. **ՀՀ տարաբնակեցման** գլխավոր նախագիծ, հաստատված ՀՀ կառավարության 10.04.2003 հ.610 որոշմամբ, <http://www.mud.am/maps/tarabnak.pdf>. Դիտում՝ 08.02.2023:
2. **Մանասյան Մ.Գ.**, ՀՀ տարաբնակեցման համակարգը, ԵՊՀ, 2005. – 400 էջ:

3. **Манасян М.Г.**, Теоретические и методологические вопросы географического исследования расселения, В кн. Теория социально-экономической географии: синтез современных знаний. Смоленск, 2006, С. 159-163.
4. **National** Statistical Service of the Republic of Armenia, www.armstat.am

М.Г. Манасян, А.М. Манасян

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ ЭКИСТИЧЕСКОЙ ПОЛИТИКИ ПЕРЕСЕЛЕНИЯ

В статье представлены основные особенности и тенденции современного расселения РА, а также существующие проблемы, обозначены принципы и направления научно-обоснованной экистической политики для их решения и механизмы их реализации. В настоящее время при проведении политики регулирования расселения важное значение приобретает обеспечение безопасности населения приграничных поселений и укрепление территориальной целостности территории РА. В статье выделены те факторы и условия, которые определяют новые направления экистической политики. На их основе предложены пять альтернативных стратегий и способов их реализации.

Ключевые слова: расселение, система расселения, региональный центр, местный центр, устойчивое расселение, укрупнение общин, экистическая политика, альтернативные стратегии.

M.G. Manasyan, H.M. Manasyan

BASIC DIRECTIONS OF THE NATIONAL RESETTLEMENT POLICY

The article presents the main features and trends of the modern settlement of the RA, as well as the existing problems, the principles and directions of the scientifically based resettlement policy for their solution and the mechanisms for their implementation. The article substantates that in the present times, during the regulation of population settlement, ensuring the safety of the border settlements and strengthening the territorial integrity of RA is of great importance. The article highlights those factors and conditions that determine the new directions of ekistic policy. On their basis, six alternative strategies and ways of their implementation are proposed.

Keywords: resettlement, resettlement systems, regional center, local center, sustainable resettlement, settlement enlargement, resettlement policy, alternative strategies.

Մանասյան Մաքսիմ Գանդիկի - աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (ՀՀ ՆԳՆ ԾԿՊԱ)

Մանասյան Հայկ Մաքսիմի - աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ («Քաղաք. և տնտեսական
նազմավարական կենտրոն» ՀԿ).

Ներկայացման ամսաթիվը՝ 06.03.2023
Գրախոսման ամսաթիվը՝ 13.03.2023